Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
դեկտեմբերի 10-ի նիստի N 54
արձանագրային որոշման

Վարկային համաձայնագիր

(Զարգացման քաղաքականության երրորդ վարկ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

Ամսաթիվ՝ [___], 2015

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ («Վարկառու») և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ («Բանկ») միջև 201_ թ. _____ կնքված համաձայնագիր՝ Ծրագրին (որը սահմանված է սույն Համաձայնագրի Հավելվածում) օժանդակելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով: Բանկը որոշել է սույն ֆինանսավորումը տրամադրել ի թիվս այլնի՝ (ա) Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակում արդեն իրականացված՝ սույն Համաձայնագրի 1-ին Ներդիրի I Բաժնում նկարագրված գործողությունների և (բ) Վարկառուի կողմից մակրոտնտեսական քաղաքականության համարժեք շրջանակի պահպանման հիման վրա: Հետևաբար, Վարկառուն և Բանկը սույնով համաձայնում են հետևյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ըստ սույն Համաձայնագրի Հավելվածի սահմանման) սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են:

1.02. Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված եզրույթները կրում են Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում իրենց վերագրված իմաստները:

ՀՈԴՎԱԾ II.ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայն է սույն Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Վարկառուին տրամադրել հիսուն միլիոն դոլար գումար ($ 50,000,000), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Համաձայնագրի 2.08 Բաժնի դրույթների համաձայն («Վարկ»):

2.02. Վարկառուն կարող է առհանել Վարկի միջոցները Ծրագրին օժանդակելու համար՝ սույն Համաձայնագրի 1-ին Ներդիրի II Բաժնի համաձայն:

2.03. Վարկառուի կողմից վճարման ենթակա Սկզբնավճարը հավասար է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%):

2.04. Վարկառուի կողմից վճարման ենթակա Պարտավճարը հավասար է Վարկի Չառհանված մնացորդի տարեկանմեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%):

2.05. Վարկառուի կողմից Տոկոսագումարի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարման ենթակա տոկոսագումարը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված Բազային դրույքաչափի և Հաստատուն սպրեդի գումարին՝ հաշվի առնելով, որ Վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի Փոխարկման դեպքում Վարկառուի կողմից Փոխարկման ժամանակահատվածում այդ գումարի համար վճարման ենթակա տոկոսագումարը որոշվում է Ընդհանուր պայմանների IV Հոդվածի համապատասխան դրույթների համաձայն: Չնայած վերոշարադրյալին, եթե Վարկի Առհանված մնացորդի որևէ գումար ժամկետը լրանալիս չի վճարվում և վճարումը շարունակում է չկատարվել երեսուն օրվա ընթացքում, ապա Վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսագումարըհաշվարկվում է Ընդհանուր պայմանների 3.02-րդ Բաժնի (ե) կետում նախատեսված կարգով:

2.06. Վճարման Ամսաթվերը յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ը և նոյեմբերի 15-ն են:

2.07. Վարկի մայր գումարը վերադարձվում է սույն Համաձայնագրի 2-րդ Ներդիրում սահմանված մարման ժամանակացույցի համաձայն:

2.08. (ա) Պարտքի շրջահայաց կառավարումը դյուրացնելու նպատակով՝ Վարկառուն կարող է ցանկացած պահի դիմել Վարկի պայմանների հետևյալ Փոխարկումներից ցանկացածը կատարելու խնդրանքով՝ (i) Վարկի մայր գումարի առհանված կամ չառհանված ամբողջ գումարի կամ դրա մի մասի Վարկի Արժույթի փոփոխություն՝ Հաստատված Արժույթի, (ii) տոկոսադրույքի բազայի փոփոխություն, որը կիրառվում է՝ (Ա) Վարկի մայր գումարի առհանված և չմարված ամբողջ գումարի կամ դրա մի մասի նկատմամբ՝ Փոփոխական Դրույքից Ֆիքսված Դրույքի կամ հակառակը, կամ (Բ) Վարկի մայր գումարի առհանված և չմարված ամբողջ գումարի կամ դրա մի մասի նկատմամբ՝ Հաշվարկային Դրույքի վրա հիմնված Փոփոխական Դրույքից և Փոփոխական Սպրեդից Ֆիքսված Հաշվարկային Դրույքի վրա հիմնված Փոփոխական Դրույքի կամհակառակըկամ (Գ) Վարկի մայր գումարի առհանված և չմարված գումարն ամբողջությամբ՝ Փոփոխական Սպրեդի վրա հիմնված Փոփոխական Դրույքից Ֆիքսված Սպրեդի վրա հիմնված Փոփոխական Դրույքի և (iii) Վարկի առհանված ամբողջ մայր գումարի և դրա մնացորդի կամ ցանկացած մասի նկատմամբ կիրառելի Փոփոխական դրույքի կամ Հաշվարկային դրույքի սահմանաչափերի սահմանումը փոփոխական դրույքի կամ Հաշվարկային դրույքի նկատմամբ տոկոսադրույքի քեփի (Interest Rate Cap) կամ տոկոսադրույքի քոլարի (Interest Rate Collar) սահմանման միջոցով:

(բ) Սույն բաժնի «ա» պարբերության համաձայն խնդրարկվածցանկացած փոխարկում, որն ընդունվում է Բանկի կողմից, համարվումէ «Փոխարկում», ինչպես սահմանվում է Ընդհանուր պայմաններում և

կատարվում է Ընդհանուր պայմանների IV հոդվածի և Փոխարկումների ուղեցույցի դրույթների համաձայն:

2.09. Առանց Բաժին2.08-ի(ա) կետի դրույթների գործողության սահմանափակման և Վարկառուի կողմից Բանկին այլ բան չծանուցելու դեպքում՝ Փոխարկման ուղեցույցի դրույթների համաձայն, Տոկոսագումարի յուրաքանչյուր ժամանակահատվածում առհանված Վարկի ընդհանուր մայր գումարի նկատմամբ կիրառելի տոկոսադրույքի բազան պետք է փոխվի սկզբնական Փոփոխական դրույքից Ֆիքսված դրույքի՝ այդ գումարի ամբողջ մարման ընթացքում՝ Ընդհանուր պայմանների IV Հոդվածի դրույթների և Փոխարկման ուղեցույցի համաձայն:

2.10 Առանց Ընդհանուր պայմանների Բաժին 5.08-ի (նշված բաժինը վերահամարակալվել է սույն Համաձայնագրի Հավելվածի Բաժին II-ի 5-րդ կետին համապատասխան և վերաբերում է «Համագործակցությանը և խորհրդակցմանը») դրույթների գործողության սահմանափակման՝ Վարկառուն պետք է անհապաղ Բանկին տրամադրի սույն 2-րդ հոդվածի դրույթներին առնչվող այն տեղեկությունները, որ Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

ՀՈԴՎԱԾ III.ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի և դրա իրականացմանն իրհավատարմության մասին: Այս նպատակով և ի լրումն Ընդհանուր պայմանների 5.08 Բաժնի դրույթների՝

(ա)Վարկառուն և Բանկը պետք է ժամանակ առ ժամանակ, կողմերից որևէ մեկի խնդրանքով, տեսակետներ փոխանակենՎարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի և Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ:

(բ) նախքան տեսակետների յուրաքանչյուր նման փոխանակումը՝ Վարկառուն Բանկի ուսումնասիրմանը և կարծիքին է ներկայացնում Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվություն, այնպիսի մանրամասնությամբ, որ Բանկը ողջամտորեն կպահանջի և

(գ) առանց սույն Բաժնի (ա) և (բ) կետերի գործողության սահմանափակման՝ Վարկառուն անմիջապես պետք է Բանկին տեղեկացնի ցանկացած իրավիճակի մասին, որը կունենա Ծրագրի նպատակները կամ Ծրագրի շրջանակում ձեռնարկված որևէ գործողության,այդ թվում սույն Համաձայնագրի 1-ին Ներդիրի I Բաժում նշված ցանկացած գործողության, ուղղությունը էականորեն շրջելու ազդեցություն:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ դեպքերը բաղկացած են հետևյալից, մասնավորապես, որ ստեղծվել է իրավիճակ, որի հետևանքով անհավանական է դառնում Ծրագրի կամ դրա նշանակալի մասի իրականացումը:

4.02.Արագացման լրացուցիչ դեպքերը ներառում են, մասնավորապես, այն իրավիճակները, երբ տեղի է ունենում սույն Համաձայնագրի Բաժին 4.01-ում սահմանված դեպքը, որը շարունակվում է իրավիճակի մասին Բանկի կողմից Վարկառուին տրված ծանուցման օրվան հաջորդող 90-օրյա ժամանակահատված:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանները ներառում են, մասնավորապես, այն, որ Բանկին բավարարում է Ծրագրի իրականացման հարցում Վարկառուի ապահոված առաջընթացը և Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համարժեքությունը:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը 2015 թ. [...] է՝ սույն Համաձայնագրի ամսաթվին հաջորդող 120-րդ օրը:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՀԱՍՑԵՆԵՐ

6.01. Վարկառուի ներկայացուցիչնիր Ֆինանսների նախարարն է:

6.02. Վարկառուի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան փողոց 1

Երևան, 0010

Հայաստանի Հանրապետություն

Ֆաքս՝

+ 374- 11800132

6.03. Բանկի հասցեն է՝

International Bank for Reconstruction and Development

1818 H Street, N.W.

Washington, D.C.20433

United States of America

Տելեքս՝ Ֆաքս՝

248423(MCI) կամ 1-202-477-6391

64145(MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է Երևանում, վերոնշյալ առաջին ամսաթվի և տարեթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

_____

Լիազոր ներկայացուցիչ

Անուն, ազգանունը՝ _____

Պաշտոնը՝ _____

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ՝

_____

Լիազորներկայացուցիչ

Անուն, ազգանունը՝_____

Պաշտոնը՝ _____

ՆԵՐԴԻՐ 1

Ծրագրի գործողությունները, Վարկային միջոցների հասանելիությունը

Բաժին I. Ծրագրի շրջանակում գործողությունները

Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակում ձեռնարկված գործողությունները ներառում են հետևյալը՝

1. 2015թ. հոկտեմբերի 8-ի Կառավարության թիվ 45 արձանագրային որոշման ընդունմամբ Վարկառուն հաստատել է Միասնական հարկային օրենսգիրքը (որը վերոնշյալ ամսաթվին սահմանված կարգով հրապարակվել է Վարկառուի www.e-gov.am պաշտոնական կայքում):

2. Էլեկտրաէներգիայի ոլորտի ֆինանսական կայունության բարելավման նպատակով Վարկառուն բարձրացրել է էլեկտրաէներգիայի վերջնական սպառման սակագինը՝ ամրագրված Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015թ. հունիսի 17-ի թիվ 174-Ն որոշմամբ (որը 2015թ. հուլիսի 15-ին սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում):

3. Վարկառուն (ա) ընդունել է «Սոցիալական ծառայությունների մասին» օրենքը՝ նպատակ ունենալով ապահովել միասնական սոցիալական ծառայությունների տրամադրում (Վարկառուի 2014թ. դեկտեմբերի 17-ի թիվ 231 օրենք, որը 2014թ. դեկտեմբերի 30-ին սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում), և (բ) ընդունել է վերոնշյալ փոփոխված օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը՝ ամրագրված Կառավարության 2015թ. օգոստոսի 31-ի թիվ 984-Ն, 2015 թ. սեպտեմբերի 10-ի թիվ 1044-Ն և 1061-Ն, և 2015թ. հունիսի 4-ի թիվ 582-Ն որոշումներում (որոնք 2015թ. հունիսի 17-ին սահմանված կարգով հրապարակվել են Պաշտոնական տեղեկագրում):

4. Ընդերքօգտագործման թափոնների կառավարումը բարելավելու և դրանով իսկ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով Վարկառուն (ա) փոփոխություններ և լրացումներ է կատարել «Թափոնների մասին» օրենքում, որոնք ամրագրված են Վարկառուի 2015 թ. հունիսի 22-ի թիվ 105 օրենքում (որը 2015թ. հուլիսի 22-ին սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում), և (բ) ընդունել է վերոնշյալ «Թափոնների մասին» փոփոխված օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը՝ ամրագրված Կառավարության 2015 թ. սեպտեմբերի 10-իթիվ 1038-Ն, 1043-Ն, 1042-Ն, 1045-Նորոշումներում (որոնք բոլորը սահմանված կարգով հրապարակվել են Պաշտնական տեղեկագրում 2015թ. սեպտեմբերի 23-ին) և Բնապահպանությաննախարարի 2015 թ. օգոստոսի 20-իթիվ 243-Նև 244-Նհրամաններում (երկու հրամաններն էլ սահմանված կարգով հրապարակվել են Պաշտոնական տեղեկագրում 2015թ. սեպտեմբերի 15-ին):

5. Տեսչական հսկողության պահանջները պարզեցնելու նպատակով Վարկառուն (ա) ընդունել է «Տեսչական մարմինների մասին» օրենքը (Վարկառուի 2014թ. դեկտեմբերի 17-ի թիվ 254-Ն օրենք, որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2015թ. դեկտեմբերի 30-ին), և (բ) ընդունել է վերոնշյալ «Տեսչականմարմիններիմասին » փոփոխված օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը, որոնց նպատակն է, ի թիվս այլոց(i) դյուրինացնել տեսչական ստուգումների համար էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդնումը, (ii) ստեղծել շուկայի վերահսկողության (ՇՎ) տեսչական մարմին, որը կունենա իր կանոնադրությունը, կազմակերպական կառուցվածքը և աշխատանքային ու մարդկային ռեսուրսների կառավարման ընթացակարգերը, և (iii) սահմանել վերոնշյալ ՇՎ-ի տեսչական մարմնի իրավասությունը հավաքագրելու վերահսկողության վերաբերյալ տեղեկություններ, համաձայն «Տեսչական բարեփոխումների ռազմավարության» և «Տեսչական մարմինների մասին» նոր օրենքի, որի մասին են փաստում 2015 թ. հունիսի 18-ի Կառավարության թիվ 677-Նև 678-Ն որոշումները (երկուսն էլ սահմանված կարգով հրապարակվել են Պաշտոնական տեղեկագրում 2015թ. հունիսի 29-ին), 2015 թ. սեպտեմբերի 10-ի Կառավարության թիվ 1063-Ն որոշումը (սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2015թ. սեպտեմբերի 23-ին) և ևԷկոնոմիկայինախարարի 2015 թ. հունիսի 29-իթիվ 856-Ահրամանը:

6. Վարկառուն հաստատել է (ա) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի փոփոխությունը, և (բ) «Իրավաբանական անձանց ծանուցման մասին»

օրենքը, որոնք երկուսն էլ ուղղված են իրավաբանական անձանց ծանուցման սկզբունքի ներդրման միջոցով նշված անձանց լիցենզավորման կարգի պարզեցմանը (ամրագրված են Վարկառուի 2015թ. մայիսի 7-ի թիվ 35-Ն և թիվ 36-Ն օրենքներում և սահմանված կարգով հրապարակվել են Վարկառուի Խորհրդարանի պաշտոնական կայքում):

7. Վարկառուն հաստատել է Փոխգործելիության ծրագիրը, որի նպատակն է ապահովել պետական էլեկտրոնային կառավարման տեղեկատվական բազաների փոխգործելիությունը և դրանց միջև տվյալների ապահով փոխանակումը (ամրագրված է Կառավարության 2015թ. օգոստոսի 31-ի թիվ 1093-Ն որոշմամբ, որը սահմանված կարգով 2015թ. սեպտեմբերի 30-ին հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում»):

8. Առևտրի դյուրինացումը բարելավելու նպատակով Վարկառուն (i) պարզեցրել է փոստային ծառայության միջոցով իրականացվող էլ-առևտրի մաքսային ձևակերպումների ընթացակարգերը՝ ամրագրված 2014թ. դեկտեմբերի 18-ի Կառավարության թիվ 1461-Ն որոշմամբ (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2014թ. դեկտեմբերի 20-ին), և (ii) Լիազորված տնտեսական օպերատորների (ԼՏՕ) գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով ինքնագնահատման ու ինքնահայտարարագրման կարգը դյուրինացնելու համար ընդունել է ենթաօրենսդրական ակտեր՝ ամրագրված 2015թ. մայիսի 21-ի Կառավարության թիվ 590-Ն որոշմամբ (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2015թ. հունիսի 17-ին),ինչպես նաև Վարկառուի Ֆինանսների նախարարի 2015թ. հունիսի 15-ի թիվ 392-Աևթիվ 389-Ա հրամաններում և 2015թ. օգոստոսի 26-ի թիվ 583-Նևթիվ 584-Ն հրամաններում (որոնք սահմանված կարգով հրապարակվել են Պաշտոնական տեղեկագրում 2015թ. սեպտեմբերի 15-ին):

9. Ինստիտուցիոնալ դաշտի հզորացման նպատակով Վարկառուն (ա) ընդունել «Ավիացիայի մասին» օրենքի փոփոխություններն ու լրացումները՝ ամրագրված Վարկառուի 2015թ. հունիսի 19-ի թիվ 101-Ն օրենքով (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2015թ. հուլիսի 22-ին), և (բ) ընդունել է «Ավիացիայի մասին» փոփոխված օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը, որոնք վերաբերում են. (i) օդային փոխադրումներ իրականացնողների լիցենզավորմանը և հավաստագրմանը, և (ii) Ավիացիայի խորհրդի ստեղծման չափանիշներին, և ամրագրված են 2015թ. օգոստոսի 6-ի Կառավարության թիվ 962-Ն, 963-Ն, 964-Ն, 965-Ն և 966-Ն որոշումներում (որոնք բոլորն էլ սահմանված կարգով հրապարակվել են Պաշտոնական տեղեկագրում 2015թ. սեպտեմբերի 2-ին):

10. Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցումն ապահովելու նպատակով Վարկառուն (ա) ընդունել է «Ապահովված գործարքների մասին» օրենքը (Վարկառուի 2014թ. դեկտեմբերի 17-ի թիվ 263-Ն օրենք, որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2014թ. դեկտեմբերի 30-ին), և (բ) ընդունել է «Ապահովված գործարքների մասին» վերոնշյալ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը, որոնք, ի թիվս այլոց, վերաբերում են. (i) վարկային ռեգիստի ստեղծմանն ուղղված գործողությունների ծրագրի իրականացմանը, (ii) որպես վարկային ռեգիստրի համար պատասխանատու մարմին ՀՀ Արդարադատության նախարարության ճանաչմանը, և (iii) ռեգիստրի վարման նպատակով համապատասխան գործակալության ստեղծմանը, և ամրագրված են 2015թ. մայիսի 14-ի Կառավարության թիվ 511-Նորոշմամբ (վերջինս սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2015թ. մայիսի 27-ին),և 2015թ. հունիսի 10-ի թիվ 633-Նորոշմամբ (վերջինս սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2015թ. հունիսի 24-ին):

11. Նպատակ ունենալով համախմբել ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի նկատմամբ վերահսկողությունը՝ Վարկառուն ընդունել է «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի և «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխություններն ու լրացումները, որոնց մասին է փաստում Վարկառուի Խորհրդարանի պաշտոնական կայքում դրանց հրապարակումը:

Բաժին II. <u>Վարկի միջոցների հասանելիությունը</u>

Ա. Ընդհանուր:Վարկառուն կարող է Վարկի միջոցներն առհանել ՝ սույն Բաժնի և այնպիսի լրացուցիչ ցուցումների դրույթների համաձայն, որ Բանկը կարող է սահմանել՝ ծանուցելով Վարկառուին:

Բ. Վարկի գումարների հատկացումը: Վարկը (բացառությամբ Սկզբնավճարի կատարման համար պահանջվող գումարների) հատկացվում է միասնական

առհանման տրանշով, որից Վարկառուն կարող է կատարել միջոցների առհանումներ: Այս նպատակով Վարկի գումարների հատկացումը սահմանվում է ստորև՝ աղյուսակում.

Հատկացումներ	**Վարկից հատկացված գումար** (արտահայտված ԱՄՆ դոլարով)
(1) Միասնական առհանման տրանշ	49,875,000
(2) Սկզբնավճար	125,000
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	50,000,000

Գ. Առհանման տրանշի բացթողնման պայմանները

Միասնական առհանման տրանշից առհանում կատարվում է բացառապես այն դեպքում, երբ Բանկը (ա) բավարար է համարում Վարկառուի կողմից Ծրագրի իրականացումը և (բ) Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համարժեքությունը:

Դ. Վարկի գումարների մուտքագրումներ. բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ համաձայնության կգա.

1. Վարկի Հաշվից բոլոր առհանումները Բանկի կողմից մուտքագրվում են Վարկառուի կողմից նշված և Բանկի համար ընդունելի հաշվին.

2. Վարկառուն պետք է ապահովի, որ սույն Հաշվին Վարկի գումարի յուրաքանչյուր մուտքագրման դեպքում համարժեք գումար հաշվառվի Վարկառուի բյուջեի կառավարման համակարգում՝ Բանկի համար ընդունելի կարգով:

Ե. **Բացառված ծախսեր**: Վարկառուն պարտավորվում է Վարկի միջոցները չօգտագործել Բացառված ծախսերի ֆինանսավորման համար: Եթե Բանկը որևէ պահի պարզում է, որ Վարկի որևէ գումար օգտագործվել է Բացառված ծախսի դիմաց վճարում կատարելու համար, Վարկառուն պետք է Բանկից ծանուցում ստանալուց անմիջապես հետո Բանկին վերադարձնի նման վճարմանը հավասար գումար: Նման պահանջով Բանկին վերադարձված գումարները պետք է չեղարկվեն:

F. **Փակման ամսաթիվ:** Փակման ամսաթիվը 2016 թ. նոյեմբերի 30-ն է:

ՆԵՐԴԻՐՀ

Մարման ժամանակացույց

1. Ստորև աղյուսակում սահմանված են Վարկի Մայր գումարի վճարման ամսաթվերը և Վարկի ընդհանուր Մայր գումարի՝ Վճարման յուրաքանչյուր ամսաթվին վճարման ենթակա տոկոսը («Մասնավճարի բաժին»): Եթե Վարկի միջոցներն ամբողջությամբ առհանվել են Վճարման առաջին ամսաթվի դրությամբ, ապա Վարկառուի կողմից Մայր գումարի Վճարման յուրաքանչյուր ամսաթվին մարման ենթակա Մայր գումարի չափը որոշվում է Բանկի կողմից՝ բազմապատկելով (ա) Մայր գումարի Վճարման առաջին ամսաթվի դրությամբ առհանված Վարկի Մնացորդը, (բ) Մայր գումարի Վճարման յուրաքանչյուր ամսաթվի համար սահմանված Մասնավճարի բաժնով, անհրաժեշտության դեպքում ճշգրտելով մարման ենթակա տվյալ գումարը՝ նվազեցնելով սույն Ներդիրի 4-րդ կետում նշված այն գումարները, որոնց վրա տարածվում է Արժույթի փոխարկումը:

Մայր գումարի վճարման ամսաթիվ	**Մասնավճարի բաժին** (տոկոսային արտահայտությամբ)
Յուրաքանչյուր մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին Սկսած 2030թ. նոյեմբերի 15-ից մինչև 2040թ. մայիսի 15-ը ներառյալ	4.76%
2040թ. նոյեմբերի 15-ին	4.80%

2. Եթե Մայր գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ Վարկի միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել,ապա Վարկառուի կողմից Մայր Գումարի

վճարման յուրաքանչյուր ամսաթվին մարման ենթակա գումարը որոշվում է հետևյալ կերպ.

(ա)Եթե Մայր գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ Վարկի միջոցներից որևէ գումար է առհանվել, ապա Վարկառուն վերադարձնում է Վարկի առհանված մնացորդն այդ ամսաթվի դրությամբ՝ սույն Ներդիրի 1-ին կետի համաձայն:

(բ) Մայր գումարի վճարման առաջին ամսաթվից հետո առհանված ցանկացած գումար պետք է վերադարձվի Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին, որը հաջորդում է առհանման այդ օրվան, Բանկի կողմից որոշված գումարներով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանման գումարը բազմապատկելով կոտորակային թվով, որի համարիչը սկզբնական Մասնավճարի բաժինն է, ինչպես նշված է սույն Ներդիրի 1-ին կետի աղյուսակում Մայր գումարի վճարման տվյալ ամսաթվի համար («Սկզբնական մասնավճարի բաժին»), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվի դրությամբ կամ դրան հաջորդող Մայր գումարի վճարման ամսաթվերին վճարման ենթակա բոլոր մնացած Մասնավճարների բաժինների հանրագումարն է. վերադարձման ենթակա այդ գումարներնանհրաժեշտության դեպքումենթակա են ճշգրտման՝ սույն Ներդիրի 4-րդ կետում նշված այն գումարները հանելու համար, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. (ա)Մայր գումարի վճարման ցանկացած ամսաթվին նախորդող երկու օրացուցային ամսվա ընթացքում Վարկի առհանված գումարները, ելնելով բացառապես Մայր գումարի վճարման ցանկացած ամսաթվին վճարման ենթակա գումարների չափը հաշվարկելու նպատակից, համարվում են առհանված և չմարված՝ առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի վճարման երկրորդ ամսաթվի դրությամբ, և վերադարձվում են Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին՝ սկսած առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի Վճարման երկրորդ ամսաթվից:

(բ)Սույն կետի (ա) ենթակետի դրույթներից անկախ՝ եթե Բանկը ցանկացած ժամանակ ընդունի հաշիվների ներկայացման ժամկետային համակարգ, որով վճարագրերը դուրս են գրվում Մայր գումարի վճարման համապատասխան ամսաթվի դրությամբ կամ դրանից հետո, այդ նշված ենթակետի դրույթներն

այլևս չեն տարածվի նման համակարգի ներդրումից հետո կատարված առհանումների վրա:

4. Սույն Ներդիրի 1-ին և 2-րդ կետերի դրույթներից անկախ՝ Վարկի Առհանված ամբողջ մնացորդի կամ դրա որևէ մասի արժույթը Հաստատված արժույթի փոխարկելու դեպքում նման եղանակով Հաստատված արժույթի փոխարկված գումարը, որը ենթակա է վերադարձման Փոխարկման ժամանակահատվածում ներառվող՝ Մայր գումարի վճարման ցանկացած ամսաթվին, որոշվում Բանկի կողմից՝ անմիջապես նախքան փոխարկումը իր արտահայտած արժույթով այդ գումարը բազմապատկելով (i) այն փոխարժեքով, որն արտացոլում է Փոխարկմանն առնչվող Արժույթի հեջավորման գործարքի շրջանակում հաստատված արժույթով Բանկին վճարման ենթակա մայր գումարները կամ (ii) եթե Բանկն այդպես որոշի, Հաշվարկային դրույքաչափի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով, Փոխարկման ուղեցույցին համապատասխան:

5. Եթե Առհանված Վարկի մնացորդն արտահայտված է Վարկի մեկից ավելի արժույթներով, ապա սույն Ներդիրի դրույթներն առանձին տարածվում են Վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի վրա, որպեսզի յուրաքանչյուր տվյալ գումարի համար կազմվի մարման առանձին ժամանակացույց:

ՀԱՎԵԼՎԱԾ

<u>Բաժին I</u>. <u>Սահմանումներ</u>

1. «Լիազորված տնտեսական օպերատորը» կամ «LSO»-ն նշանակում է իրավաբանական անձ, որը գործում է Եվրասիական Մաքսային Միության Մաքսային օրենսգրքով նախատեսված պահանջներին համապատասխան:

2. «Ավիացիայի խորհուրդը» նշանակում է խորհրդակցական մարմին՝ ստեղծված Կառավարության 2015թ. օգոստոսի 6-ի թիվ 1003-Ն որոշման համաձայն, որի հիմնական գործառույթները ներառում են կանոնավոր

օդային փոխադրումների իրականացման հայտերի գնահատումը և եզրակացությունների տրամադրումը Էկոնոմիկայի նախարարությանը՝ հետագա որոշումների կայացման համար:

3. «Բացառված ծախսերը» նշանակում է ցանկացած ծախս.

(ա) պայմանագրի հիման վրա մատակարարված այն ապրանքների ու ծառայությունների համար, որոնք ազգային կամ միջազգային ֆինանսավորող որևէ հաստատություն կամ գործակալություն, բացառությամբ Բանկի կամ Ընկերակցության, ֆինանսավորել է կամ համաձայնել է ֆինանսավորել, կամ որոնք Բանկը կամ Ընկերակցությունը ֆինանսավորել կամ համաձայնել են ֆինանսավորել մեկ այլ վարկի, փոխառության կամ դրամաշնորհի շրջանակում.

(բ) ՄԱԿ-ի կողմից հրապարակված Վիճակագրական փաստաթղթերում (Series M, No. 34/Rev.3 (1986)) Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգման (վերանայված 3-րդտարբերակ, «SITC», Rev.3) (այսուհետ՝ «SITC») հետևյալ խմբերում կամ ենթախմբերում կամ «SITC»-ի ապագա վերանայումների շրջանակում փոխարինող խմբերում կամ ենթախմբերում ներառված ապրանքների համար, որոնք Բանկի կողմից կնշվեն՝ ծանուցելով Վարկառուին.

Խումբ	Ենթախումբ	Ապրանքի նկարագրություն
112		Ալկոհոլային խմիչքներ
121		Ծխախոտի հումք, ծխախոտի թափոն
122		Ծխախոտ՝ մշակված (անկախ ծխախոտին փոխարինող նյութեր պարունակելու հանգամանքից)

525		Ռադիոակտիվ և հարակից նյութեր
667		Մարգարիտներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ մշակված կամ չմշակված
718	718.7	Միջուկային ռեակտորներ և դրանց մասեր, վառելիքի տարրեր (քարթրիջներ)՝ չճառագայթված, միջուկային ռեակտորների համար
728	728.43	Ծխախոտի վերամշակման սարքեր
897	897.3	Ոսկու, արծաթի կամ պլատինի խմբի մետաղյա զարդեր (բացի ձեռքի ժամացույցներից և ժամացույցի պատյաններից) և ոսկյա ու արծաթյա իրեր (այդ թվում՝տեղադրվածթանկարժեք քարեր)
971		Ոչ դրամական ոսկի (բացառությամբ ոսկու հանքանյութի և խտանյութերի)

(գ) ռազմական կամ կիսառազմական նշանակության ապրանքների կամ սպառման շքեղ իրերի համար.

(դ) շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը կամ ներմուծումն արգելված է Վարկառուի օրենքներով կամ միջազգային այն համաձայնագրերով, որոնց կողմ է հանդիսանում Վարկառուն.

(ե) ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի համաձայն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ընդունած որոշմամբ արգելված վճարումների համար և

(զ) որի առնչությամբ Բանկը պարզում է, որ Վարկառուի որևէ ներկայացուցիչ կամ Վարկի միջոցների որևէ այլ ստացող ներգրավվել է կոռումպացված, խարդախ գործողություններում, մասնակցել է որևէ գաղտնի համաձայնության կամ հարկադրանքի գործողություններում, իսկ Վարկառուն (կամ նման այլ ստացողը) Բանկի կողմից բավարար համարվող քայլեր ժամանակին չի ձեռնարկել նման գործելակերպերի տեղի ունենալու ընթացքում դրանց արձագանքելու ուղղությամբ:

4. «ՀՆԾ»-ն նշանակում է Վարկառուի «Հրատապ նպաստների ծրագիրը»՝ սահմանված Վարկառուի 2013թ. դեկտեմբերի 13-ի թիվ 154-Ն օրենքում (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2013թ. դեկտեմբերի 28-ին):

5. «ԸՆԾ»-ն նշանակում է Վարկառուի «Ընտանեկան նպաստների ծրագիր»՝ սահմանված 2013թ. դեկտեմբերի 13-ի թիվ 154-Ն օրենքում (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2013թ. դեկտեմբերի 28-ին):

6. «Ընդհանուր պայմանները» նշանակում է 2012թ. մարտի 12-ի «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկերի ընդհանուր պայմանները», ներառյալ սույն Հավելվածի Բաժին II-ում նշվող փոփոխությունները:

7. «ՄՌ»-ն նշանակում է մարդկային ռեսուրսներ:

8. «Փոխգործելիության ծրագիրը» նշանակում է Վարկառուի ծրագիր, որի նպատակն է ապահովել պետական էլեկտրոնային կառավարման տեղեկատվական բազաների փոխգործելիությունը և դրանց միջև տվյալների ապահով փոխանակումը (ընդունվել է Կառավարության 2015թ. օգոստոսի 31-ի թիվ 1093-Ն որոշմամբ):

9. «Ավիացիայի մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2007թ. փետրվարի 22-ի թիվ 81-Ն օրենքը, որը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2007թ. մարտի 28-ին:

10. «Բանկային համակարգի մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 1996թ. հունիսի 30-ի թիվ 68 օրենքը, որը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 1996թ. օգոստոսի 29-ին:

11. «Իրավաբանական անձանց ծանուցման մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2015թ. մայիսի 7-ի թիվ 36-Ն օրենքը, որը հրապարակվել է Խորհրդարանի պաշտոնական կայքում:

12. «ՀՀ Կենտրոնական բանկի մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 1996թ. հունիսի 30-ի թիվ 69 օրենք, որը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 1996թ. օգոստոսի 29-ին:

13. «Վարկային կազմակերպությունների մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2001թ. նոյեմբերի 6-ի թիվ 262 օրենքը, որը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2001թ. դեկտեմբերի 15-ին:

14. «Տեսչական մարմինների մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2014թ. դեկտեմբերի 17-ի թիվ 254-Ն օրենքը (հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2014թ. դեկտեմբերի 30-ին):

15. «Ապահովագրության մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2007թ. ապրիլի 9-ի թիվ 177-Ն օրենքը, որը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2007թ. սեպտեմբերի 30-ին:

16. «Կենսաթոշակների մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 1998թ. դեկտեմբերի 28-ի թիվ 275 օրենքը, որը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 1998թ. դեկտեմբերի 31-ին:

17. «Արժեթղթերի մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2007թ. հոկտեմբերի 11-ի թիվ 195-Ն օրենքը, որը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2007թ. հոկտեմբերի 31-ին:

18. «Առևտրի և ծառայությունների մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2004թ. նոյեմբերի 24-ի թիվ 134-Ն օրենքը, որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2004թ. դեկտեմբերի 28-ին:

19. «Ապահովված գործարքների մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2014թ. դեկտեմբերի 17-ի թիվ 263-Ն օրենքը (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2014թ. դեկտեմբերի 30-ին):

20. «Սոցիալական ծառայությունների մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2014թ. դեկտեմբերի 17-ի թիվ 231 օրենքը (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2014թ. դեկտեմբերի 30-ին):

21. «Թափոնների մասին օրենքը» նշանակում է Վարկառուի 2004թ. նոյեմբերի 24-ի թիվ 159-Ն օրենքը (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում 2004թ. նոյեմբերի 24-ին):

22. «ԷՆ»-ն նշանակում է Վարկառուի Էկոնոմիկայի նախարարությունը կամ նրա իրավահաջորդը՝ ընդունելի Բանկի համար:

23. «ԱՆ»-ն նշանակում է Վարկառուի Արդարադատության նախարարությունը կամ նրա իրավահաջորդը՝ ընդունելի Բանկի համար:

24. «ՇՎ»-ն նշանակում է շուկայի վերահսկողություն:

25. «Ծրագիր» նշանակում է գործողությունների, նպատակների և քաղաքականությունների ծրագիր, որը կոչված է աճի խթանմանը և աղքատության կայուն կրճատումների ապահովմանը և սահմանված կամ հիշատակված է Վարկառուի 2015թ. նոյեմբերի 12-ի՝ Բանկին ուղղված նամակում, որով Վարկառուն հայտարարում է Ծրագիրն իրականացնելու իր հանձնառության մասին և իրականացման ընթացքում Ծրագրին օժանդակելու համար հայցում է Բանկի աջակցությունը:

26. «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը» նշանակում է Վարկառուի կարգավորող մարմին, որի պարտականությունները, ի թիվս այլոց, ներառում են լիցենզիաների տրամադրումը, կարգավորման ենթակա ծառայությունների սակագների սահմանումը, կարգավորվող կազմակերպությունների ներդրումային ծրագրերի ուսումնասիրումն ու հաստատումը:

27. «Սոցիալական ծառայությունները» նշանակում է Վարկառուի հանրային ծառայություններ, որոնք, ի թիվս այլոց, կապված են կենսաթոշակների, զբաղվածության, սոցիալական աջակցության, հաշմանդամության նպաստների հետ:

28. «Միասնական առհանման տրանշը» նշանակում է սույն Համաձայնագրի 1-ին ներդիրի II Բաժնի Բ Մասում նշված աղյուսակի «Միասնական առհանման տրանշ» վերնագրված խմբին հատկացված Վարկի գումարը:

29. «Միասնական հարկային օրենսգիրքը» նշանակում էհարկային կանոններ և ընթացակարգեր պարունակող օրենսգրքի նախագիծը՝ հաստատված Կառավարության 2015թ. հոկտեմբերի 8-ի թիվ 45 արձանագրային որոշմամբ (որը սահմանված կարգով հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում վերոնշյալ ամսաթվին):

Բաժին II. Ընդհանուր պայմանների փոփոխություններ

Սույնով Ընդհանուր Պայմանները փոխվում են հետևյալ ձևով.

1. **Բովանդակության** մեջ Բաժիններին, Բաժինների անվանումներին և Բաժինների համարներին կատարվող հղումները փոփոխվում են՝ ստորև ներկայացված փոփոխություններն արտացոլելու համար:

2. 2.03-րդ Բաժնի (ա) պարբերության վերջին նախադասությունը (կապված Առհանման հայտերի հետ) ամբողջությամբ հանվել է:

3. 2.04 (*Հատուկ հաշիվներ)* և 2.05 (*Թույլատրելի ծախսեր*) Բաժինները ամբողջությամբ հանվել են, իսկ II Հոդվածի մնացած Բաժինները համապատասխանաբար վերահամարակալել են:

4. Բաժին 3.01.(*Սկզբնավճարը*) փոխվում է հետևյալ բովանդակությամբ.

«Բաժին 3.01 *Սկզբնավճար, պարտավճար*

(ա) Վարկառուն Բանկին վճարում է Վարկի գումարի նկատմամբ սկզբնավճար՝ Վարկային համաձայնագրում նշված դրույքաչափով («Սկզբնավճար»):

(բ) Վարկառուն Բանկին Վարկի չառհանված մնացորդի նկատմամբ վճարում է պարտավճար՝ Վարկային համաձայնագրում սահմանված դրույքաչափով («Պարտավճար»): Պարտավճարը հաշվեգրվում է Վարկային համաձայնագրի ամսաթվից 60 օր հետո՝ մինչև համապատասխան ամսաթվերը, որոնց ժամանակ Վարկառուի կողմից Վարկային հաշվից գումարներն առհանվում կամ չեղարկվում են: Պարտավճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր Վճարման Ամսաթվին՝ կիսամյակային կտրվածքով՝ ժամանակաշրջանի վերջում»:

5. 5.01 (*Ծրագրի ընդհանուր իրականացում*), և 5.09-ը (*Ֆինանսական կառավարում, ֆինանսական հաշվետվություններ, աուդիտներ*) Բաժիններն ամբողջությամբ հանվել են, իսկ Հոդված V-ի հաջորդ Բաժինները համապատասխանաբար վերահամարակալվել են:

6. 5.05 Բաժնի (ա) կետը (վերահամարակալվել է վերոնշյալ 5-րդ կետի համաձայն և վերաբերում է *Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների օգտագործմանը*) ամբողջությամբ հանվել է:

7. 5.06 Բաժնի (գ) կետը (վերահամարակալվել է վերոնշյալ 5-րդ կետի համաձայն) վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ.

«Բաժին 5.06.*Պլաններ, փաստաթղթեր, գրանցումներ*

… (գ) Փակման ամսաթից հետո երկու տարվա ընթացքում Վարկառուն պետք է պահի Վարկի շրջանակում կատարված ծախսերի մասին փաստող բոլոր գրանցումները (պայմանագրերը, հանձնարարականները, հաշիվ-ապրանքագրերը, վճարման հաշիվները, ստացականները և այլ փաստաթղթերը): Վարկառուն պետք է Բանկի ներկայացուցիչներին տա այդ գրանցումներն ուսումնասիրելու հնարավորություն:»

8. 5.07 Բաժնի (գ) կետը (վերահամարակալվել է վերոնշյալ 5-րդ կետի համաձայն) վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ.

«Բաժին 5.07. *Ծրագրի մոնիթորինգ և գնահատում*

… (գ) Վարկառուն պետք է կազմի կամ ապահովի, որ կազմվի և Փակման ամսաթվից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում Բանկին ներկայացվի Ծրագրի կատարման, Իրավական պայմանագրերի շրջանակում Վարկի կողմերի և Բանկի համապատասխան պարտավորությունների

կատարման և Վարկի նպատակների իրագործման մասին հաշվետվություն՝ այնպիսի շրջանակով և մանրամասնությամբ, որը Բանկը ողջամտորեն կպահանջի:»

9. Հավելվածում(**«Սահմանումներ»**) Բաժինների համարների և կետերի համապատասխան բոլոր հղումներն, ըստ անհրաժեշտության, փոխվում են՝ արտացոլելու վերոնշյալ փոփոխությունները:

10. Հավելվածը փոխվել է՝ լրացնելով նոր 19-րդ կետ «Պարտավճար»-ի հետևյալ սահմանմամբ և համապատասխանաբար հաջորդ կետերի վերահամարակալմամբ.

«19. «Պարտավճար» նշանակում է պարտավորության վճար, որը սահմանվում է Վարկային համաձայնագրում՝ 3.01(բ) Բաժնի նպատակով:»

11. Հավելվածի («Փոխանակման ամսաթիվ») վերահամարակալված 21-րդ (ի սկզբանե՝ 20-րդ) կետըվերաշարադրվել է հետևյալ կերպ.

«21. «Փոխարկման ամսաթիվը» նշանակում է Փոխարկման կատարման այն ամսաթիվը կամ Բանկի կողմից որոշված որևէ այլ օրը, երբ Փոխարկումը ուժի մեջ է մտնում (մանրամասն սահմանումը տրվում է Փոխարկման ուղեցույցում), պայմանով, որ եթե Վարկային համաձայնագրով նախատեսվում է Վարկի գումարների առհանման պահին ավտոմատ փոխարկում Հաստատված արժույթի, ապա Փոխարկման ամսաթիվ է համարվում Վարկի հաշվից այն գումարի առհանման ամսաթիվը, որի առնչությամբ հայցվել է փոխարկման կատարումը:»

12. Հավելվածի վերահամարակալված 37-րդ կետը (սկզբում՝ 36-րդ կետ) «Թույլատրելի ծախսեր») վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ.

«37. «Թույլատրելի ծախսերը» նշանակում է Ծրագրին օժանդակելու նպատակով Վարկի ցանկացած օգտագործում, բացառությամբ ըստ Վարկային համաձայնագրի բացառված ծախսերի ֆինանսավորման:»

13. Հավելվածի վերահամարակալված 44-րդ կետը (սկզբում 43-րդ կետ) «Ֆինանսական հաշվետվություններ») ամբողջությամբ հանվել է:

14. Հավելվածի48-րդ կետում «Սկզբնավճար»-ի սահմանումը փոխվել է՝3.01-րդ Բաժնի հղումը փոխարինելով 3.01 (ա) Բաժնի հղումով:

15. Հավելվածի վերահամարակալված 67-րդ կետում «Վարկի վճարման» սահմանումը փոխվում է հետևյալ բովանդակությամբ.

«67. «Վարկի վճարում» նշանակում է ցանկացած գումար, որն Իրավական պայմանագրերի կամ սույն Ընդհանուր պայմանների համաձայն Վարկի Կողմ հադիսացողների կողմից ենթակա է վճարման Բանկին, ներառյալ՝ (սակայն չսահմանափակվելով) Վարկի Առհանված մնացորդի, տոկոսագումարի, Սկզբնավճարի, Պարտավճարի, Դեֆոլտի Տոկոսադրույքով տոկոսագումարի (եթե կա), կանխավճարի պարգևավճարի ցանկացած գումարը, Փոխարկման կամ Փոխարկման վաղաժամկետ դադարեցման գործարքի վճարը, Փոփոխական սպերդի ֆիքսման վճարը (եթե կա), Տոկոսադրույքի Քեփի կամ Տոկոսադրույքի Քոլարի սահմանման դեպքում վճարման ենթակա պարգևավճարը, կամ սխալմամբ կատարված ֆինանսական գործարքից առաջացած Մասի Փոխհատուցումը, որը ենթակա է վճարման Վարկառուի կողմից:»

16. Հավելվածի 72-րդ կետում «Վճարման Ամսաթվի» սահմանումը փոխվում է՝ «տոկոսագումար» բառից հետո հանելով «է» բառը և լրացնելով «և Պարտավճարը են:»

17. Հավելվածի 75-րդ կետում «Նախագիծ» հասկացությունը փոխարինվել է «Ծրագիր» հասկացությամբ, և դրա սահմանումը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ (և սույն Ընդհանուր պայմաններում «Նախագծին» կատարվող բոլոր հղումները համարվում են «Ծրագրին» կատարված հղումներ):

«75. «Ծրագիր» նշանակում է Վարկային համաձայնագրում նշվող ծրագիրը, որին աջակցելու նպատակով տրամադրվում է Վարկը:»